ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԿՈԼԵԳԻԱՅԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 6-Ի ՆԻՍՏՈՒՄ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՄԱՆ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիան 2020 թվականի մարտի 6-ի նիստում քննարկել է Հայաստանի Հանրապետության դատախազության 2019 թվականի աշխատանքի արդյունքները և ընդունել համապատասխան որոշում, որի կենսագործումն ապահովելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 22-րդ հոդվածի 5-րդ մասով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ ե մ՝

1. Ապահովել Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիայի 2020 թվականի մարտի 6-ի նիստում ընդունված որոշման կենսագործումը (06.03.2020թ. նիստի N 1 արձանագրությունը կցվում է):

2. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալների վրա՝ ըստ նրանց հանձնարարված ոլորտների:

3. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին և Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ

Արձանագրություն N 1

Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիայի
2020 թվականի մարտի 6-ի նիստի

Նախագահում էր՝ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանը:

Մասնակցում էին կոլեգիայի անդամներ՝ Արմ.Հարությունյանը, Հ.Ասլանյանը, Դ.Մելքոնյանը, Վ.Հարությունյանը, Ա.Մարուխյանը, Վ.Ռաֆայելյանը, Գ.Պողոսյանը, Ե.Ավագյանը, Ա.Սիմոնյանը, Ա.Փանոսյանը, Գ.Բաղդասարյանը, Ա. Աֆանդյանը, Կ. Բիշարյանը, Ա. Չախոյանը, Ր. Ասլանյանը, Ա. Մարտիրոսյանը:

Ներկա էին՝ ՀՀ դատախազության ավագ դատախազներ Ա.Նիկողոսյանը, Պ. Պետրոսյանը, ՀՀ գլխավոր դատախազության վարչությունների պետերի տեղակալները, ավագ դատախազներն ու դատախազները, ՀՀ զինվորական դատախազի տեղակալները, ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության ավագ դատախազները, բաժինների պետերը, բաժինների ավագ դատախազներն ու դատախազները, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների, մարզերի և կայազորների զինվորական դատախազները, դատախազների տեղակալները, ՀՀ գլխավոր դատախազի խորհրդականներն ու օգնականները, ՀՀ դատախազության գլխավոր քարտուղարը:

ՕՐԱԿԱՐԳ

Հայաստանի Հանրապետության դատախազության 2019թ. աշխատանքի արդյունքների ամփոփումը:

Զեկուցողներ՝
ՀՀ գլխավոր դատախազի տեղակալներ՝ Ա.Հարությունյան, Դ.Մելքոնյան, Հ.Ասլանյան:

Լսեցին՝ Ա.Հարությունյանին, Դ.Մելքոնյանին, Հ.Ասլանյանին:
Արտահայտվեց՝ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանը:

Լսելով և քննարկելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներ Ա.Հարությունյանի, Դ.Մելքոնյանի և Հ.Ասլանյանի զեկուցումները Հայաստանի Հանրապետության դատախազության 2019 թվականի աշխատանքի արդյունքների մասին՝ Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիան նշում է, որ համակարգի մարմինները, իրականացնելով ՀՀ Սահմանադրությամբ և «Դատախազության մասին» ՀՀ օրենքով իրենց վերապահված լիազորությունները, ղեկավարվելով ՀՀ գործող օրենսդրությամբ, ՀՀ գլխավոր դատախազի հրամաններով, ՀՀ դատախազության կոլեգիայի որոշումներով, զգալի աշխատանք են կատարել հանրապետությունում օրինականությունը պահպանելու և հանցավորության դեմ համակարգված ու արդյունավետ պայքար

կազմակերպելու, քննության որակը բարելավելու, հանցանք կատարած անձանց քրեական պատասխանատվության և պատժի անխուսափելիությունն ապահովելու ուղղությամբ:

Այսպես.

2019թ. ընթացքում հանրապետությունում արձանագրվել է հանցագործության 26.850 դեպք (2018թ.՝ 24.678), որոնցից 14.961-ը՝ Երևան քաղաքում:

Նախորդ տարվա համեմատությամբ հանցագործության դեպքերն աճել են 2172-ով կամ 8.8%-ով (2018թ.՝ 2267-ով կամ 11.2%-ով):

Հանցավորության շարժընթացի վերլուծությունը վկայում է, որ հանցագործությունների դեպքերի աճն ապահովվել է առավելապես միջին ծանրության (7463 դեպք կամ ընդհանուր հանցագործությունների 27.8%-ը) և ծանր (4490 դեպք կամ ընդհանուր հանցագործությունների 16.7%-ը) հանցագործությունների հաշվին, սակայն աճել են նաև ոչ մեծ ծանրության և առանձնապես ծանր հանցագործությունների դեպքերը:

Այսպես, ոչ մեծ ծանրության հանցագործությունները 2019թ. աճել են 521-ով (14092-14613) կամ 3.7%-ով, միջին ծանրության հանցագործությունները՝ 739-ով (6724-7463) կամ 11.0%-ով, ծանր հանցագործությունները՝ 852-ով կամ 23.4%-ով (3638-4490), իսկ առանձնապես ծանր հանցագործության դեպքերն աճել են 60-ով կամ 26.8%-ով (224-284):

Հանցագործության դեպքերի աճին զուգահեռ 4,5%-ով նվազել է դրանց բացահայտման ընդհանուր ցուցանիշը:

Ըստ առանձին հանցատեսակների՝ հանցագործությունների շարժընթացն ունի հետևյալ պատկերը.

Մարդու դեմ ուղղված հանցագործություններ - 2019 թվականի ընթացքում արձանագրվել է մարդու դեմ ուղղված հանցագործության 4293 դեպք /2018թ.՝ 4964/:

Պետք է արձանագրել, որ, չնայած մարդու դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի էական նվազմանը, 12-ով կամ 34.3 %-ով աճ է արձանագրվել սպանություններով /35-47/: Ընդ որում, Երևան քաղաքում արձանագրվել է 42 % /12-17/, իսկ ՀՀ մարզերում՝ 30,4 % -ով:

2019 թվականին արձանագրված սպանությունների թվում զգալի մաս են կազմում հրազենի կամ պայթուցիկ նյութերի գործադրմամբ դեպքերը /47-ից 17-ը, 2018թ.՝ 35-ից 5-ը/, բացի այդ, նախնական ուսումնասիրությունը ցույց է տվել, որ այդ դեպքերի շարքում զգալի մաս են կազմում այնպիսիք, որոնք նախկինում կատարված հանցագործության դեպքերի շարունակությունն են:

Հաշվետու ժամանակահատվածում, ինչպես նախորդ տարում, արձանագրվել է սպանության փորձի 28 դեպք, իսկ սպանության նախապատրաստության՝ 2 դեպք: Սակայն դրանց գերակշիռ մաս են կազմում հրազենի կամ պայթուցիկ նյութերի գործադրմամբ դեպքերը /28-ից՝ 18-ը, 2018թ.՝ 28-ից 12-ը/: Ընդ որում Երևան քաղաքում սպանության փորձի դեպքերի թիվը նվազել է 25%-ով, իսկ մարզերում աճել է 17%-ով:

40-ով կամ 20,9%-ով /191-231/ աճ է արձանագրվել դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու դեպքերի թվում:

Սեփականության դեմ ուղղված հանցագործություններ - 2019 թվականի ընթացքում, նախորդ տարվա համեմատությամբ, Հայաստնի Հանրապետությունում արձանագրվել է սեփականության դեմ ուղղված հանցագործությունների էական՝ 2143 դեպքով կամ 17.8%-ով աճ (12056-14199), իսկ Երևան քաղաքում դեպքերն աճել են 1635-ով կամ 21.7%-ով (7541-9176):

Հատկանշական է, որ ինչպես առանձին հանցատեսակներով, այնպես էլ սեփականության դեմ ուղղված հանցագործություններն, ընդհանուր առմամբ, վերջին տարիներին առկա է դինամիկ աճի միտում: Օրինակ, 2009 թվականին հանրապետությունում

արձանագրվել է սեփականության դեմ ուղղված հանցագործությունների 5578 դեպք, իսկ հաշվետու տարում՝ 14199 դեպք, այսինքն՝ վերջին 10 տարվա ընթացքում սեփականության դեմ ուղղված հանցագործություններն աճել են գրեթե 3 անգամ:

Ինչպես միշտ, հաշվետու տարում ևս, սեփականության դեմ ուղղված հանցագործությունները կազմել են հանրապետությունում արձանագրված հանցագործությունների կեսից ավելին՝ կազմելով արձանագրված դեպքերի 52. 9%-ը:

Կոլեգիան փաստում է, որ դեպքերի աճին զուգահեռ, սեփականության դեմ ուղղված հանցագործությունների բացահայտման գործընթացում արձանագրվել է դրական փոփոխություն՝ բացահայտման ցուցանիշն աճել է 1%-ով՝ կազմելով 47.4%՝ նախորդ տարվա 46.4%-ի դիմաց, իսկ Երևան քաղաքում բացահայտման ցուցանիշը բարելավվել է 5.5%-ով՝ կազմելով 45.3%՝ նախորդ տարվա 39.8%-ի դիմաց, սակայն հանցավորության աճը և բացահայտման աճը համաչափ և համադրելի չեն:

Կոլեգիան արձանագրում է, որ ինչպես ընդհանուր հանցագործությունների, այնպես էլ սեփականության դեմ ուղղված հանցագործությունների զանգվածում, ինչպես և նախորդ տարիներին, զգալի տեսակարար կշիռ են կազմում և որոշակիորեն անհանգստացնող են անձնական գույքի հափշտակությունների, մասնավորապես՝ գողությունների, այդ թվում՝ բնակարանային գողությունների դեպքերը: Հանրապետության տարածքում գրանցված, բացահայտման տոկոսում հաշվառվող 26850 հանցագործության դեպքերի զանգվածում անձնական գույքի հափշտակությունների 12737 դեպքերի տեսակարար կշիռը կազմում է 47.4%: Ինչպես սեփականության դեմ ուղղված հանցագործությունների, այնպես էլ անձնական գույքի հափշտակությունների մասով հանցավորության շարժընթացում տեղի է ունեցել տեսանելի բացասական փոփոխություն՝ հանրապետության տարածքում արձանագրվել է անձնական գույքի հափշտակությունների աճ 2030 դեպքով կամ 19%-ով (12737-10707), ու դարձյալ բացահայտման ցուցանիշի բարելավմամբ՝ 47%՝ նախորդ տարվա 44. 9%-ի դիմաց:

Արձանագրվել է նաև գողության դեպքերի աճ 1881-ով կամ 21. 3%-ով: Հաշվետու տարում արձանագրվել է այդպիսի 10732 դեպք: Անձնական ունեցվածքի հափշտակության դեպքերի աճի պայմաններում, հաշվետու ժամանակահատվածում հանրապետության տարածքում արձանագրվել է բնակարանային գողությունների աճ 257 դեպքով կամ 17. 9%-ով (1695-1438), այդ թվում՝ Երևան քաղաքում 58 դեպքով կամ 7.2%-ով (859-801): Բացահայտման ցուցանիշն էապես չի փոփոխվել և ինչպես միշտ ցածր է՝ այն կազմել է 21.1%՝ նախորդ տարվա 20.6%-ի դիմաց, և ըստ էության, սեփականության դեմ ուղղված հանցագործությունների բացահայտման ցուցանիշում ամենացածրը հենց բնակարանային գողությունների բացահայտումն է: Դեպքերն աճել են Երևան քաղաքի գրեթե բոլոր վարչական շրջաններում և մարզերում, բացառությամբ Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն, Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների, ինչպես նաև Շիրակի և Սյունիքի մարզերում՝ միաժամանակ բացահայտման ցուցանիշի բարելավմամբ: Հիշյալ բնույթի դեպքերի կտրուկ աճ է արձանագրվել Գեղարքունիքի մարզում 38 դեպքով կամ 105. 6%-ով, Կոտայքի մարզում՝ 82 դեպքով կամ 49. 7%-ով, Արագածոտնի մարզում՝ 10 դեպքով կամ 45. 5%-ով, Լոռու մարզում՝ 37 դեպքով կամ 42%-ով, Արմավիրի մարզում՝ 28 դեպքով կամ 34. 6%-ով: Բնակարանային գողությունների աճի բարձր ցուցանիշներ արձանագրած մարզերից բացահայտման ցուցանիշի անկում է արձանագրվել Գեղարքունիքի մարզում 13.8%՝ նախորդ տարվա 50%-ի դիմաց, Կոտայքի մարզում 26. 2%՝ նախորդ տարվա 35. 9%-ի դիմաց և Լոռու մարզում 22. 8%՝ նախորդ տարվա 31. 8%-ի դիմաց:

Ընդ որում, ՀՀ տարածքում գրանցված բնակարանային գողության դեպքերից 859-ը կամ 42. 2%-ը բաժին է ընկել Երևան քաղաքին:

Մայրաքաղաքում քննված բնակարանային գողության 1076 դեպքերից բացահայտվել է 140-ը, 829-ը մնացել է չբացահայտված, բացահայտումը կազմել է 13%՝ նախորդ տարվա 9.6%-ի դիմաց:

Միևնույն ժամանակ, հաշվետու տարում մանրամասն ուսումնասիրվել են գողության դեպքերի շարժընթացում տեղի ունեցած փոփոխությունները, մասնավորապես, դրանց զգալի աճի պատճառների բացահայտման նպատակով: Արդյունքում պարզվել է, որ գողության դեպքերը հիմնականում կատարվել են հագուստի խանութներում, հասարակական տրանսպորտում և զվարճանքի վայրերում քաղաքացիների դրամապանակների, բջջային հեռախոսների, ինչպես նաև բակերում և կայանատեղերում կայանված ավտոմեքենաների վրայից, դրանց սրահներից տարբեր տեսակի իրերի գաղտնի հափշտակության ձևով:

Կոլեգիան փաստում է, որ հափշտակությունների, այդ թվում գողությունների դեպքերի շարժընթացում արձանագրված բացասական, հատկապես բացահայտման ցուցանիշները, առանձին դեպքերում պայմանավորված են նաև վարույթն իրականացնող մարմինների աշխատանքի ցածր արդյունավետությամբ, քանզի արձանագրվել են դեպքեր, երբ ի հակառակ ՀՀ դատախազության կոլեգիայի 2017 թվականի հոկտեմբերի 27-ի նիստի որոշման պահանջների, դեպքի վայրի զննությունը կատարվել է խիստ մակերեսային, որի պայմաններում անգամ հնարավություն չի ընձեռնվել պատկերացնելու, թե տուժողի բնակարանը շենքի որ հարկում է գտնվում և տվյալ բնակարանին մոտենալու ուղիները հագեցված են արդյոք տեսախցիկներով, թե՝ ոչ: Բացի այդ, արձանագրվել են նաև դեպքեր, երբ թեև դեպքի վայրի զննությամբ արձանագրվել են տեսանկարահանող սարքեր, սակայն վարույթն իրականացնող մարմնի կողմից անհետաձգելի քննչական գործողությունները՝ առգրավումները ժամանակին չկատարելու արդյունքում տեսաերիզները ջնջված են եղել, որն ինչ խոսք բացասաբար է անդրադարձել հանցագործության բացահայտման գործընթացի վրա:

Արձանագրվել են նաև դեպքեր, երբ վարույթն իրականացնող մարմինները դեպքի վայրի զննությունը կատարել են առանց մասնագետների, փորձագետների, ինչն էլ ավելի է նվազեցրել պիտանի հետքեր հայտնաբերելու հնարավորությունը: Բացի այդ, խիստ անթույլատրելի միտում է նկատվել վարույթն իրականացնող մարմինների կողմից նմուշներ ստանալու գործընթացում: Բանն այն է, որ նմուշներ ստանալու հարաբերությունները կարգավորող քրեադատավարական նորմերը ենթարկվել են փոփոխության և ներկայիս կարգավորումներով մարդուց նմուշները վերցվում են բացառապես մասնագետի ու փորձագետի կողմից, սակայն նկատի ունենալով, որ տարածքներում համապատասխան քանակի մասնագետներ, փորձագետներ առկա չեն, առանձին դեպքերում անձանցից առհասարակ նմուշներ չեն վերցվել և համապատասխան փորձաքննություններ չեն նշանակվել, ինչը ևս, կարծում ենք, իր բացասական ազդեցությունն է թողել հանցագործությունների բացահայտման աշխատանքների վրա:

Կոլեգիայի նիստի ընթացքում արձանագրվեց նաև, որ գողության մեկ այլ տարատեսակ ևս հաշվետու տարում լայն տարածում է ստացել և արձանագրված դեպքերի մեջ դրանք ունեն լուրջ քանակական կշիռ: Խոսքը վերաբերում է տարբեր խոշոր առևտրի կենտրոնների՝ «Դալմա Գարդեն Մոլ», «Երևան Մոլ» և այլն, վաճառասրահներից հագուստ գողանալու դեպքերին, ինչի կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազությունում ստացվել են նշված առևտրի կենտրոններում գործող տնտեսվարողների կոլեկտիվ դիմումները: Նշված խնդրի կապակցությամբ թեև ՀՀ գլխավոր դատախազության կողմից արդեն իսկ ձեռնարկվել են որոշակի միջոցներ, մասնավորապես, ՀՀ գլխավոր դատախազի կողմից ՀՀ ոստիկանապետին տրվել է հանձնարարություն՝ նշված առևտրի կենտրոններում արտաքին ծառայություններն ավելացնելու ուղղությամբ, սակայն կարծում ենք, որ դրանք բավարար չեն և տարածքի իրավապահ մարմինները պետք է համապատասխան հետևողականություն

դրսևորեն հատկապես կրկնահանցագործների նկատմամբ խափանման միջոցների և պատժատեսակի ընտրության վերաբերյալ:

Ավազակային հարձակման դեպքերի շարժընթացում ևս 2019 թվականի ընթացքում արձանագրվել են որոշակի փոփոխություններ՝ գրանցվել է ավազակային հարձակման 62 դեպք՝ նախորդ տարվա 47-ի դիմաց, այսինքն դեպքերն աճել են 15-ով կամ 31.9%-ով, որն, ինչ խոսք, մտահոգիչ է, ընդ որում աճ է արձանագրվել նաև Երևան քաղաքում 8 դեպքով կամ 32%-ով: Հուսադրող է այն հանգամանքը, որ այս հանցատեսակի բացահայտման ցուցանիշը բավականին բարձր է՝ 78. 8%՝ նախորդ տարվա 66.7 %-ի դիմաց: Այսպիսով, 2019 թվականի ընթացքում հանրապետությունում քննված ավազակության 80 դեպքից 63-ը բացահայտվել է, 17-ը մնացել է չբացահայտված:

2019 թվականի ընթացքում ՀՀ տարածքում սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով նախապատրաստվել է 18897 նյութ՝ նախորդ տարվա 15784-ի դիմաց: Հարուցվել է 9893 քրեական գործ՝ նախորդ տարվա 8022–ի դիմաց:

Հաշվետու ժամանակահատվածում սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով դատախազների կողմից դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն է իրականացվել 15666 քրեական գործի նկատմամբ՝ նախորդ տարվա 10956-ի դիմաց, ինչը կազմում է հանրապետությունում քննված 30156 քրեական գործերի՝ բացառությամբ զինվորական հանցագործությունների, 52%-ը: Տվյալ քրեական գործերից 1910–ը փոխանցվել է նախորդ տարվանից, իսկ 3704 քրեական գործ ստացվել է այլ մարմիններից:

ՀՀ դատախազության ստորաբաժանումների կողմից դատավարական ղեկավարում իրականացվող քրեական գործերով պետությանը պատճառվել է 2,152,538,815 ՀՀ դրամ, որից վերականգնվել է 270,297,230 ՀՀ դրամ:

Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով 2019 թվականի ընթացքում 964 քրեական գործ 1230 անձի նկատմամբ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան /նախորդ տարի 768 գործ 1009 անձի նկատմամբ/: Նույն ժամանակահատվածում դատախազների կողմից մեղադրանք է պաշտպանվել 681 քրեական գործով 876 անձի նկատմամբ /նախորդ տարի 688 գործ 893 անձի նկատմամբ/, որից 532 գործով 685 անձի նկատմամբ կայացվել են մեղադրական դատավճիռներ /նախորդ տարի 535 գործ 704 անձի նկատմամբ/, 12 գործով 22 անձի նկատմամբ կայացվել են արդարացման դատական ակտեր /նախորդ տարի 15 գործ 28 անձի նկատմամբ/:

Դատապարտված 685 անձանցից ազատազրկման են դատապարտվել 418-ը կամ 61%-ը, 2-ը դատապարտվել են կալանքի, 173-ը կամ 26%-ը՝ տուգանքի, 92 անձի կամ 13,5%-ի նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել և սահմանվել է փորձաշրջան: 4 գործով 4 անձի նկատմամբ կիրառվել են դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ:

Վկայակոչված տվյալները փաստում են, որ նախորդ տարվա համեմատ պատժողական քաղաքականությունը խստացվել է և ազատազրկման տոկոսն ավելացել է 16,5%-ով: Կոլեգիան փաստում է, որ պատժողական նման քաղաքականությունն արդարացված է՝ պայմանավորված այն հանգամանքով, որ սեփականության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերը տարեցտարի ավելանում են:

Կոլեգիայի նիստի ընթացքում անդրադարձ կատարվեց հատկապես բնակարանային գողությունների դեմ պայքարին: Նկատի ունենալով, որ առանձին տարածքներում, որտեղ առավել հետևողականություն է դրսևորվել դատախազության նախաձեռնությամբ անվտանգության տեխնիկական միջոցների տեղադրման հարցում, նկատվել է ինչպես բնակարանային գողությունների նվազման, այնպես էլ բացահայտման ցուցանիշների բարելավման միտում, հանձնարարվել է ակտիվացնել այդ ուղղությամբ աշխատանքները նաև

մյուս տարածքներում՝ գործակցության դաշտ ներգրավելով ՏԻՄ-երին և իրավասու այլ մարմիններին:

Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններ - 2019թ. հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ իրավասու մարմինների վարույթում տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ նախապատրաստվել է ընդամենը 1514 նյութ (2018թ.-1139 նյութ), որից 931-ով (2018թ.-680) հարուցվել են քրեական գործեր, 528-ով՝ (2018թ.-353) քրեական գործ հարուցելը մերժվել է, 55 նյութ (2018թ.-85) ուղարկվել է ըստ ենթակայության: Բացի հարուցված 931 (2018թ.-680) քրեական գործերից հաշվետու ժամանակաշրջանում վարույթ է ընդունվել 269 (2018թ.-177) քրեական գործ, որից 128-ը (2018թ.-83)՝ նախկինում կարճված կամ կասեցված և վարույթը վերսկսված, 124-ը (2018թ.-74)՝ այլ մարմնից ստացված, 3-ը (2018թ.-0)՝ այլ պետության քրեական հետապնդում իրականացնող մարմիններից ստացված, 1-ը (2018թ.-1)՝ դատախազի կողմից լրացուցիչ քննության վերադարձված և 13-ը՝ (2018թ.-9) քննվող քրեական գործերից անջատված մասեր, ինչպես նաև վարույթում են գտնվել նախորդ տարվանից փոխանցված 357 (2018թ.-366) քրեական գործեր:

Համադրելով 2019թ. և 2018թ. տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների ընդհանուր ցուցանիշները պարզ է դառնում, որ.

2019թ.-ի ընթացքում նախապատրաստվել է 1,3 անգամ կամ 375-ով ավել նյութ քան 2018թ.-ին, հարուցվել է նույնքան անգամ կամ 251-ով ավել քրեական գործ քան 2018թ.-ին:

Տարվա ընթացքում վարույթում քննվել է 1,3 անգամ կամ 325-ով ավել քրեական գործ, քան 2018թ.-ին, ու 1 անգամ կամ 15-ով ավել քրեական գործի վարույթ է կարճվել, քան 2018թ.-ին:

Դատարան է ուղարկվել 1,4 անգամ կամ 9-ով ավել քրեական գործ և 1,3 անգամ կամ 10-ով ավել անձի վերաբերյալ, քան 2018թ:

Դրական ցուցանիշներ են արձանագրվել հաշվետու ժամանակահատվածում քննված և հաջորդ տարի փոխանցված քրեական գործերի արդյունքներում: Եթե 2018թ.-ից 2019թ. է փոխանցվել 366 քրեական գործի վարույթ, ապա 2019թ.-ից 2020թ. է փոխանցվել 27-ով պակաս՝ 339 քրեական գործի վարույթ:

2019 թ. նախապատրաստված և ավարտված նյութերով, քննված և ավարտված քրեական գործերով, ինպես նաև դատարանում քննված ու ավարտված քրեական գործերով պետությանը պատճառված վնասի և դրա վերականգնման գործընթացքում արձանագրվել է.

2019թ. ընթացքում տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով թվով 245 նախապատրաստված և ավարտված նյութերով, ու քննված և ավարտված քրեական գործերով ինպես նաև դատարանում քննված ու ավարտված քրեական գործերով պետությանը պատճառված վնասը կազմել է 12.399.916.587 ՀՀ դրամ, որից վերականգնվել է 8.301.785.992 ՀՀ դրամը:

2019թ. ընթացքում ՀՀ դատարաններում քննվել և ավարտվել են ընդհանուրը 24 քրեական գործեր՝ 28 անձի վերաբերյալ, այդ թվում 1 անձ գտնվել է նախնական կալանքի տակ: Ավարտված քրեական գործերից 10-ը՝ 12 անձի վերաբերյալ, քննվել են արագացված դատաքննության կարգով: Քրեական գործերից 16-ով՝ 18 անձ, դատապարտվել են, որից 14 անձ՝ ազատազրկման, 4 անձ՝ տուգանքի, 3 անձի նկատմամբ կիրառվել են նաև լրացուցիչ պատիժներ, 12 անձ պատժից ազատվել է համաներման ակտով: 2 գործով 2 անձինք արդարացվել են:

Կարճվել է 6 գործ 8 անձի վերաբերյալ, որոնցից 2 գործով անցնող 2 անձի վերաբերյալ մասը կարճվել է ՀՀ քրեական դատավարության 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով, 2-ի անձի վերաբերյալ մասը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ

հոդվածով, 2-ինը՝ ՀՀ քրեական դատավարության 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, իսկ 2-ինը՝ այլ հիմքերով:

Դատարանում քննված և ավարտված քրեական գործերով պետությանը պատճառված ընդհանուր վնասը կազմել է 165.152.480 ՀՀ դրամ, որից վերականգնվել է 6.859.900 ՀՀ դրամը:

Կոլեգիան փաստում է, որ վերոգրյալը մեծապես պայմանավորված է ինչպես ստվերային տնտեսության դեմ տարվող պետական քաղաքականությամբ, այնպես էլ քրեական հետապնդման մարմինների կողմից հետևողական, գրագետ պլանավորված, արդյունավետ և համագործակցված գործողությունների իրականացմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ գլխավոր դատախազության տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազները դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն են իրականացրել ՀՀ ՊԵԿ քննչական վարչության քննիչների և ՀՀ ՊԵԿ հետաքննության և օպերատիվ հետախուզության վարչության հետաքննիչների կողմից նախապատրաստված նյութերի նկատմամբ: Նշված ժամանակահատվածում նախաքննության և հետաքննության մարմինների կողմից նախապատրաստվել և ավարտվել են ընդամենը 577 նյութ (2018թ.- 488):

2019թ. ընթացքում տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության կողմից 580 քրեական գործի նկատմամբ իրականացվել է դատախազական հսկողություն և դատավարական ղեկավարում: Համեմատության համար նշենք, որ այդ թիվը 64 քրեական գործով ավել է նախորդ՝ 2018թ. իրականացրած հսկողական քրեական գործերի թվից (2018թ. - 516):

2019թ. ընթացքում վարույթում գտնվող 580 քրեական գործից ՊԵԿ քննչական վարչության քննիչների կողմից ավարտվել է 187 (2018թ.-172) քրեական գործի վարույթ: Ավարտված գործերից 10-ը (2018թ.-5) 12 անձի (2018թ.-6) վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

Ավարտված 187 քրեական գործերից 177-ի (2018թ.-167) վարույթները կարճվել են, որոնցից 160-ը՝ (2018թ.-131) արդարացման, 17-ը՝ (2018թ.-36) ոչ արդարացման հիմքերով, այդ թվում 3-ը՝ (2018թ.-4) վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով:

Ընթացք տրված մնացած քրեական գործերից 49-ը (2018թ.-31) ուղարկվել են ըստ ենթակայության, 31 (2018թ.-36) քրեական գործերի վարույթներ միացվել են: Թվով 84 (2018թ.-48) քրեական գործերի վարույթներ կասեցվել են, որոնցից 19-ը (2018թ.-26)՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով, 59-ը (2018թ.-22)՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով, 6-ը՝ այլ հիմքով:

Վարույթում գտնվող 229 (2018թ.-229) քրեական գործեր մնացել են անավարտ:

Վարչության կողմից իրականացվող վերահսկողության շրջանակներում 2019թ. ընթացքում ստուգվել է տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ 39 քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումների օրինականություն, որի արդյունքում ՀՀ գլխավոր դատախազի կողմից վերացվել է վարույթը կարճելու 2 (2018թ.-1) որոշում:

Նույն ժամանակահատվածում վերահսկողության կարգով ստուգվել է տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ 436 քրեական գործի վարույթը կասեցնելու մասին որոշման օրինականություն:

2019թ. ընթացքում ՊԵԿ քննչական վարչությունում ավարտված նյութերով և ավարտված քրեական գործերով, ինչպես նաև դատարաններում քննված և ավարտված քրեական գործերով հանցագործությամբ պետությանը պատճառված ընդհանուր վնասը

կազմել է 7.143.725.160 ՀՀ դրամ, որից 2019թ. ընթացքում վերականգնվել է 4.723.956.287 ՀՀ դրամը:

ՀՀ ՊԵԿ քննչական վարչությունում 2019թ. հարուցված ու վարույթ ընդունված քրեական գործերով պետությանը պատճառված վնասը կազմել է 15.872.895.049 ՀՀ դրամ, իսկ վարույթն ավարտված ու նախաքննության փուլում գտնվող քրեական գործերով պետությանը պատճառված վնասից վերականգնվել է 5.778.433.064 ՀՀ դրամ:

Ավարտված ընդհանուր գործերով, պետությանը պատճառված վնասը վերականգնելու նպատակով, 2019 թվականի ընթացքում ՊԵԿ քննչական վարչությունում քննված 21 քրեական գործերով արգելանքներ են դրվել 2.604.235.782 ՀՀ դրամ գույքի ու դրամական միջոցների վրա:

Բացի այդ դատարաններում քննված ու ավարտված քրեական գործերով պետությանը պատճառված վնասի վերականգնման նպատակով քրեական դատավարության կարգով դատարան են ներկայացվել հայցադիմումներ, ընդհանուրը՝ 159.852.480 ՀՀ դրամ հօգուտ պետբյուջե բռնագանձելու պահանջով, որոնք բավարարվել են, իսկ մեկ քրեական գործով ամբաստանյալը վճարել է պետությանը պատճառված վնասը՝ 1.559.900 ՀՀ դրամ:

2019 թվականի ընթացքում ՀՀ ՊԵԿ քննչական վարչության քննիչների կողմից քննված քրեական գործերից 11-ը (2018թ.-5) 13 անձի (2018թ.-6) վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են ՀՀ ընդհանուր իրավասության դատարաններ:

Դատարաններում քննվող 10 քրեական գործերից 12 անձի նկատմամբ կայացվել է մեղադրական դատավճիռ, այդ թվում 1 անձի նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, 2 անձի նկատմամբ կիրառվել է տուգանք, 9 անձ դատապարտվել են ազատազրկման, որոնց նկատմամբ կիրառվել է համաներման ակտ:

Դատարանում քննվող 1 քրեական գործով 1 անձի նկատմամբ կայացվել է արդարացման դատավճիռ, (2018թ.՝ 2 քրեական գործով 2 անձի նկատմամբ):

Վարչության դատախազների կողմից հաշվետու ժամանակահատվածում հարուցվել է 1 քրեական գործ,վերացվել են քրեական գործ հարուցելու մասին 8 որոշումներ, ինչպես նաև վերահսկողության շրջանակներում նախապատրաստվել է քրեական գործի վարույթը կարճելու մասին երկու որոշման նախագծր ու ՀՀ գլխավոր դատախազի կողմից այդ գորերով կայացրած գործի վարույթը կարճելու մասին որոշումները վերացվել են:

<u>Հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործություններ</u> - 2019 թվականի ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ՀՀ գլխավոր դատախազության հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության իրավասությանը վերապահված հանցագործության 2623 դեպք, որից 1058-ը կամ 40.3 %-ը՝ Երևան քաղաքում, իսկ 1565-ը կամ 59.7%-ը՝ ՀՀ մարզերում: 2018 թվականի արձանագրվել է 2469 դեպք, այսինքն՝ հանցագործությունների դեպքերն աճել են 154-ով կամ 6.2%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում հանրապետությունում 225-ով կամ 17.3%-ով աճել են ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու դեպքերը: Այդ թվում 6-ով, կամ 2,7 %-ով աճել են նաև մահվան ելքով դեպքերը: Ընդ որում, 2019 թվականի ընթացքում արձանագրված ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու 1523 դեպքից՝ 703-ը կամ 46.1%-ը արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ 820-ը կամ 53.9%-ը ՀՀ մարզերում: Մահվան ելքով արձանագրված 226 դեպքից 70-ը կամ 31%-ը արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ 156-ը կամ 69%-ը ՀՀ մարզերում:

Մահվան ելքով ճանապարհատրանսպորտային հանցագործությունների կանխարգելման նպատակով վերահսկողական գործառույթի շրջանակներում վարչության դատախազները հետևել են, որպեսզի այդօրինակ հանցագործություններ կատարած անձանց նկատմամբ իրականացվի խիստ պատժողական քաղաքականություն և հատկապես

բացառվեն ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքերն այն իրավիճակներում, երբ անզգուշությամբ մարդու մահ առաջացրած ճանապարհատրանսպորտային հանցագործությունը հետևանք է ճանապարհային երթևեկության կանոնների կոպիտ խախտումների: Ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու և անզգուշությամբ անձանց մահ կամ առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելու դեպքերի աճը հիմնականում պայմանավորված է վարորդների կողմից սահմանված արագությունը գերազանցելու, երթևեկության հանդիպակաց գոտի դուրս գալու, տրանսպորտային միջոցի ղեկին քնելու, ոչ սթափ վիճակում տրանսպորտային միջոցը վարելու և մի շարք այլ հանգամանքներով: Հարկ է նշել նաև, որ հազվադեպ չեն այն դեպքերը, երբ ճանապարհատրանսպորտային պատահարների պատճառ են հանդիսանում հետիոտների ոչ իրավաչափ վարքագիծը, որոնք ոչ սահմանված վայրում են հատում ճանապարհները, ինչի հետևանքով առանձին դեպքերում վարորդները տեխնիկական տեսակետից վրաերթը կանխելու հնարավորություն չեն ունենում: Ճանապարհատրանսպորտային պատահարները երբեմն տեղի են ունենում հետիոտնային անցումների գծանշումների անտեսանելիության, հետիոտնային կարգավորվող անցումների լուսացույցները վարորդների տեսադաշտից դուրս գտնվելու, տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերի բացակայության պատճառով: Պետք է արձանագրել նաև, որ ճանապարհային երթևեկության կանոնների խախտման դեպքերի աճը, բացի վերը նշված և այլ գործոններից, պայմանավորված է նաև 2019 թվականի ընթացքում շահագործվող տրանսպորտային միջոցների թվաքանակի շարունակական աննախադեպ աճով:

Հաշվետու ժամանակահատվածում առավել մտահոգիչ աճ է արձանագրվել անտառային ֆոնդի կամ դրանցից դուրս գտնվող տարածքներում ապօրինի ծառահատման դեպքերով՝ 180-ից 282, այսինքն՝ դեպքերն աճել են 102-ով կամ 56.7 %-ով:

Ապօրինի ծառահատումների դեպքերի նման շարժընթացը պայմանավորված է այդ տեսակի հանցագործությունների լատենտայնության մակարդակի նվազմամբ և դրան ուղիղ համեմատական՝ հանցագործությունների դեպքերի բացահայտման քանակական ցուցանիշի աճով: Այդուհանդերձ, արձանագրված պատկերը վկայում է նաև իրավասու մարմինների կողմից այս տեսակի հանցագործությունների կանխարգելման ուղղությամբ պատշաճ միջոցներ ձեռնարկված չլինելու մասին:

Հաշվետու տարում զգալիորեն նվազել են լատենտայնության բարձր աստիճան ունեցող հրազենի, ռազմամթերքի ապօրինի շրջանառության դեպքերը: Եթե 2018 թվականին արձանագրվել է նման բնույթի 674 դեպք, ապա 2019 թվականի ընթացքում՝ 586 դեպք, այսինքն՝ դեպքերը նվազել են 88-ով կամ 13.1%-ով:

Բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործություններ - 2019թ. ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածքում արձանագրվել է բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործության 1294 դեպք: Արձանագրված դեպքերով հարուցվել է 940 քրեական գործ: 324 նյութերով մերժվել է քրեական գործի հարուցումը, որից 318-ը՝ արդարացման հիմքով, 6-ը՝ ոչ արդարացման հիմքով: 30 նյութ ուղարկվել է ըստ ենթակայության:

Ընդհանուր առմամբ, 2019թ. ընթացքում վարույթ է ընդունվել 1172 քրեական գործ: 2018 թվականից 2019 թվական է փոխանցվել 245 քրեական գործ: Հարուցված քրեական գործերով 616 անձինք ներգրավված են եղել որպես մեղադրյալներ: Մեղադրյալներից 157-ի նկատմամբ խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

Հաշվետու ժամանակահատվածում ավարտվել է 550 քրեական գործ: 110 քրեական գործով որոշումներ են կայացվել վարույթը կարճելու վերաբերյալ, որոնցից 66-ը կարճվել է արդարացման հիմքով, 44-ը՝ ոչ արդարացման հիմքով:

Ընդհանուր իրավասության դատարան է ուղարկվել 404 քրեական գործ: Նշված քրեական գործերով որպես մեղադրյալ է ներգրավված եղել 486 անձ: Մեղադրյալներից 112-ի նկատմամբ խափանման միջոց է կիրառված եղել կալանավորումը: 2 գործ 2 անմեղսունակ ճանաչված անձի վերաբերյալ դատարան է ուղարկվել բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու միջնորդությամբ:

458 քրեական գործով որոշումներ են կայացվել վարույթները կասեցնելու մասին, այդ թվում՝ 439-ը՝ հանրորեն վտանգավոր արարք կատարած անձի ինքնությունը պարզված չլինելու, 19-ը՝ մեղադրյալի գտնվելու վայրը հայտնի չլինելու կամ քննությունից խուսափելու հիմքով: 240 քրեական գործի նախաքննություն փոխանցվել է 2020թ.:

2019թ. ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է 379 քրեական գործ՝ 2018թ. ընթացքում հարուցված 320-ի փոխարեն: Արձանագրված դեպքերն աճել են 57-ով կամ 17,8%-ով:

2019թ. ընթացքում արձանագրվել է ՀՀ քրեական օրենսգրքի 267.1-րդ հոդվածով նախատեսված՝ թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և (կամ) դրանց պրեկուրսորների մաքսանենգության 180 դեպք, հարուցվել է 173 քրեական գործ:

2019թ. ընթացքում արձանագրվել է ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածով նախատեսված՝ առանց իրացնելու նպատակի թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության 496 դեպք, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 371-ի փոխարեն: Հարուցվել է 257 քրեական գործ, 2018թ. ընթացքում հարուցված 249-ի փոխարեն: Հարուցված քրեական գործերի թիվը աճել 8-ով կամ 3,2 %-ով:

2019թ. ընթացքում արձանագրվել է ՀՀ քրեական օրենսգրքի 279-րդ հոդվածով նախատեսված՝ անվտանգության պահանջներին չհամապատասխանող ապրանքներ թողարկելու կամ իրացնելու, աշխատանքներ կատարելու կամ ծառայություններ մատուցելու վերաբերյալ 66 դեպք, հարուցվել է 52 քրեական գործ:

Կոռուպցիոն բնույթի հանցագործություններ - 2019թ. ընթացքում ՀՀ իրավասու մարմինների վարույթում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ նախապատրաստվել է 2083 նյութ (2018թ.- 1988 նյութ), որից 1399-ով (2018թ.- 1469) հարուցվել են քրեական գործեր, 655-ով՝ (2018թ.- 451) քրեական գործ հարուցելը մերժվել է, իսկ 29 նյութ (2018թ.- 68) ուղարկվել ըստ ենթակայության: Բացի հարուցված 1399 (2018թ.- 1469) քրեական գործերից՝ հաշվետու ժամանակաշրջանում վարույթ է ընդունվել 535 (2018թ.- 337) քրեական գործ, որից 116-ը (2018թ.- 101)՝ նախկինում կարճված կամ կասեցված և վարույթը վերսկսված, 354-ը (2018թ.- 206)՝ այլ մարմնից ստացված, 1-ը (2018թ.- 0)՝ այլ պետության քրեական հետապնդման մարմնից ստացված, 15-ը (2018թ.- 4)՝ դատախազի կողմից լրացուցիչ քննության վերադարձված և 49-ը (2018թ.-26)՝ քննվող քրեական գործերից անջատված մասեր, ինչպես նաև վարույթում են գտնվել նախորդ տարվանից փոխանցված 691 (2018թ.-266) քրեական գործ:

2019թ. ընթացքում ՀՀ իրավասու մարմինների վարույթում նախապատրաստված և քրեական գործ հարուցելը մերժված 655 (2018թ.- 451) նյութից 603-ը (2018թ.- 410) մերժվել է արդարացման, իսկ 52-ը (2018թ.- 41)՝ ոչ արդարացման հիմքերով:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ նախաքննական մարմինների վարույթում քննված 2625 (2018թ.- 2072) քրեական գործից ընդամենը ավարտվել է 1006 (2018թ.-749) գործի վարույթ, որից 766-ը (2018թ.- 598) կարճվել է:Վարույթը կարճված 766 քրեական գործերից 576-ի (2018թ.- 472) վարույթը կարճվել է արդարացման, իսկ 190-ը՝ (2018թ.- 126)՝ ոչ արդարացման հիմքերով: Վարույթը ավարտված մյուս 240 քրեական գործերը՝ 447 անձի վերաբերյալ (2018թ.- 151-ը՝ 266 անձի վերաբերյալ), մեղադրական եզրակացությամբ

ուղարկվել են դատարան, ընդ որում՝ 447 անձանցից 27-ը (2018թ.- 21) գտնվել են կալանքի տակ:

Նշված ժամանակահատվածում վարույթում գտնվող 2625 (2018թ.- 2072) քրեական գործերից 138-ի (2018թ.- 88) վարույթը կասեցվել է, որից 102-ինը (2018թ.- 64)՝ անձը հայտնի չլինելու, 31-ինը (2018թ.- 23)՝ անձի հետախուզման մեջ գտնվելու, իսկ 5-ինը (2018թ.-1)՝ այլ հիմքերով: 319 (2018թ.- 142) քրեական գործ ուղարկվել է ըստ ենթակայության, 343 (2018թ.- 415) գործ՝ միացվել է, 819 (2018թ.-678) գործի նախաքննություն (նշված գործերով 29 (2018թ.- 35) անձ գտնվել է կալանքի տակ) փոխանցվել է հաջորդ տարի:

Պետական շահերի պաշտպանության ոլորտ - 2019թ. ընթացքում պետական շահերի պաշտպանության վարչության կողմից «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով սահմանված կարգով պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական (պետական բաժնեմասով) կազմակերպությունների՝ պետության գույքային շահերին առնչվող հայցերի վերաբերյալ ստացված տեղեկատվության, պետական մարմինների հաղորդումների, ՀՀ վերահսկիչ պալատի հաշվետվությունների, ՀՀ դատախազության աշխատանքի ծրագրերի, զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների, ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների հիմքերով 75 ուսումնասիրություն է իրականացվել պետական կառավարման տարբեր ոլորտներում պետական շահերի պաշտպանության վիճակի վերաբերյալ, ներկայացվել է 15 հաղորդում և միջնորդագիր, հարուցվել է պետական շահերի պաշտպանության 3 հայց՝ ընդհանուր 1 մլրդ. 079 մլն. 557 հազ. դրամ հայցապահանջով:

Հայտնաբերված մի շարք խախտումների կապակցությամբ պետական շահերի պաշտպանության վարչության դատախազների կողմից հարուցվել է 45 քրեական գործ, որոնցով պետությանը պատճառված ընդհանուր վնասը կազմել է 16 մլրդ. 497 մլն. 310 հազ. դրամ, 19 դեպքերով ուսումնասիրությունների արդյունքները՝ պետությանը պատճառված ընդհանուր 12 մլրդ. 802 մլն. 056 հազ. դրամ վնասի վերաբերյալ ուղարկվել են քննչական մարմիններ, որոնցով հարուցվել է 7 քրեական գործ (2 դեպքով ուսումնասիրության արդյունքները կցվել են հարուցված քրեական գործերին):

Այսպիսով, ընդհանուր առմամբ 2019թ. ընթացքում վարչության կողմից հարուցված պետական շահերի պաշտպանության հայցերով, հարուցված քրեական գործերով և քննչական մարմիններ ուղարկված նյութերով պետությանը պատճառված ընդհանուր վնասը կազմել է 30 մլրդ. 378 մլն. 923 հազ. դրամ:

Վարչության դատախազների կողմից նախորդ տարի հարուցված քրեական գործերով վերականգնվել է շուրջ 915 մլն. դրամ:

Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանում՝ վարչությունը կատարել է 86 ուսումնասիրություն, ներկայացվել է 20 հաղորդում, հարուցվել է պետական շահերի պաշտպանության 7 հայց՝ ընդհանուր 4 մլրդ. 584 մլն. 521 հազ. դրամ հայցապահանջով, հարուցվել է 29 քրեական գործ, որոնցով պետությանը պատճառված ընդհանուր վնասը կազմել է 3 մլրդ. 113 մլն. 055 հազ. դրամ, 38 դեպքերով ուսումնասիրությունների արդյունքները՝ պետությանը պատճառված ընդհանուր 2 մլրդ. 142 մլն. 239 հազ. դրամ վնասի վերաբերյալ ուղարկվել են քննչական մարմիններ, որոնցով հարուցվել է 18 քրեական գործ:

Ընդհանուր առմամբ 2018թ. ընթացքում վարչության կողմից հարուցված հայցերով, քրեական գործերով և քննչական մարմիններ ուղարկված նյութերով պետությանը պատճառված ընդհանուր վնասը կազմել է 9 մլրդ. 839 մլն. 815 հազ. դրամ:

Ինչպես երևում է թվային ցուցանիշներից՝ նախորդ հաշվետու ժամանակահատվածի համեմատ շուրջ 65 տոկոսով ավելացել է վարչության դատախազների կողմից հարուցված

քրեական գործերի քանակը և շուրջ 6 անգամ ավելացել են հարուցված քրեական գործերով և քննչական մարմիններ ուղարկված նյութերով պետությանը պատճառված վնասի չափը:

Այսպես, 2019թ.-ին հարուցված քրեական գործերով և քննչական մարմիններ ուղարկված նյութերով պետությանը պատճառված ընդհանուր վնասը կազմել է 29 մլրդ. 299 մլն. 366 հազ. դրամ, 2018թ.-ի 5 մլրդ. 255 մլն. 294 հազ. դրամի դիմաց, ինչը կապված է դատախազների հետևողական աշխատանքի՝ իրականացված մեծածավալ, բազմադրվագ, ուսումնասիրությունների, պետական շահերին վերաբերվող խախտումները հայտնաբերելիս դրանք պատշաճ արձանագրելու, համապատասխան գնահատական տալու, պետությանը պատճառված վնասը վերականգնելու և խախտումները վերացնելու ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների հետ:

Հարուցված քրեական գործերի ինչպես նաև արձանագրված պետությանը պատճառված վնասի աննախադեպ ցուցանիշները կապված են նաև ընդհանուր առմամբ պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների և քաղաքացիների կողմից դատախազության նկատմամբ վստահության զգալի բարձրացմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում հանրապետության դատախազության բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների, ներառյալ՝ վարչության կողմից կատարվել է 736 ուսումնասիրություն /2018թ.՝ 626 ուսումնասիրություն/, հայտնաբերվել է 939 իրավախախտում /2018թ.՝ 1.345 իրավախախտում/, պետության շահերին հասցրած վնասը կամովին վերականգնելու մասին նախազգուշացվել է 167 անձ /2018թ.՝ 208 նախազգուշացում/, կամովին պետական բյուջե է վերականգնվել է 114 մլն. 277 հազ. դրամ /2018թ.՝ վերականգնվել է 525 մլն. 553 հազ. դրամ/, ուսումնասիրության արդյունքներով ներկայացվել է 92 հաղորդում և միջնորդագիր /2018թ.՝ 163 հաղորդում/, հարուցվել է 228 քրեական գործ /2018թ՝ հարուցվել է 243 քրեական գործ/, 338 դեպքերով ուսումնասիրությունների արդյունքները ուղարկվել են ըստ ենթակայության նյութեր նախապատրաստելու համար:

Ընդհանուր առմամբ պետական շահերի պաշտպանության հարցադրումներով ձեռնարկված միջոցառումներով՝ հարուցված հայցերով, հարուցված քրեական գործերով և քննչական մարմիններ ուղարկված նյութերով պետությանը պատճառված ընդհանուր վնասը կազմել է 32 մլրդ. 884 մլն. 264 հազ. դրամ, որից 30 մլրդ. 378 մլն. 923 հազ. դրամը վարչության կողմից:

Դատախազության բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների, ներառյալ՝ վարչության կողմից, այդ թվում նախորդ տարի հարուցված քրեական գործերով վերականգնվել է շուրջ 1. մլրդ 164 մլն. դրամ, որից վարչությանը՝ շուրջ 915 մլն. դրամը:

2019թ. -ի ընթացքում պետական շահերի պաշտպանության ոլորտում իրականացրած ուսումնասիրությունների արդյունքում հարուցված քրեական գործերի և արձանագրված վնասի առումով բարձր ցուցանիշներ են արձանագրել Երևան քաղաքի, ՀՀ Լոռու և Շիրակի մարզերի դատախազությունները:

ՀՀ Երևան քաղաքի դատախազության ձեռնարկած միջոցառումների արդյունքում 2019թ. -ի ընթացքում հարուցվել է 6 քրեական գործ, որոնցով արձանագրվել է 773 մլն. դրամի վնաս:

ՀՀ Լոռու մարզի դատախազության ձեռնարկած միջոցառումների արդյունքում 2019թ. -ի ընթացքում հարուցվել է 128 քրեական գործ, որոնցով արձանագրվել է 963 մլն. 708 հազ. դրամի վնաս, վերականգնվել է 177 մլն. 205 հազ. դրամը:

ՀՀ Շիրակի մարզի դատախազության ձեռնարկած միջոցառումների արդյունքում 2019թ. -ի ընթացքում հարուցվել է 36 քրեական գործ, որոնցով արձանագրվել է 52 մլն. 504 հազ. դրամի վնաս, վերականգնվել է 42 մլն. 117 հազ. դրամը:

Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության ոլորտ - ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և

հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության կողմից 2019 թվականի ընթացքում ձերբակալվածներին պահելու վայրերում, քրեակատարողական հիմնարկներում, պրոբացիայի ծառայությունում և մյուս համապատասխան հիմնարկներում ու կազմակերպություններում կատարվել է 62 ստուգում և ուսումնասիրություն, որոնց արդյունքում հայտնաբերվել է 507 խախտում: Պատկան մարմիններին ուղարկվել է 5 հաղորդում: Ներկայացվել է 39 միջնորդագիր, որոնց հիման վրա վերանայվել է օրենսդրության խախտումներով կայացված 39 ակտ: Վարչության ստուգումների արդյունքներով հարուցվել է 1 քրեական գործ:

2019 թվականի ընթացքում կասեցվել և հետագայում վերանայվել են 39 որոշում՝ որոնք վերաբերել են դատապարտյալների նկատմամբ քրեակատարողական հիմնարկի պետերի կողմից տույժեր և խրախուսանքի միջոցներ կիրառելուն և ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի տեղաբաշխման հանձնաժողովի կողմից կայացված որոշումներին: Նշված որոշումներից 26-ը վերաբերել են ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում ցմահ ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ խրախուսանքի միջոցներ կիրառելուն:

Ստուգվել է 2018 թվականի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների պետերի կողմից կալանավորված անձանց կամ դատապարտյալների նկատմամբ կիրառված տույժերի և խրախուսանքների վերաբերյալ կայացված որոշումների համապատասխանությունը գործող օրենսդրությանը:

Արդյունքում հայտնաբերվել է 140 խախտում, որոնց վերաբերյալ հաղորդում է ուղարկվել ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության պետին:

Ստուգվել է 2018 թվականի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության կողմից կատարված աշխատանքների օրինականության և ՀՀ օրենսդրության պահանջներին դրանց համապատասխանության վիճակը: Ստուգումների արդյունքում հայտնաբերվել է 306 խախտում, որոնց վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության պետին ուղարկվել է հաղորդում, ինչի արդյունքում ծառայության պետի կողմից ձեռնարկվել են անհրաժեշտ բոլոր միջոցները՝ արձանագրված խախտումները վերացնելու ուղղությամբ, ծառայության ստորաբաժանումներից մեկում նախաձեռնվել է ծառայողական քննություն, որն ընթացքի մեջ է:

Հայտնաբերված երեք խախտումներով ՀՀ գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալին ներկայացվել են զեկուցագրեր, որոնցից մեկի հիման վրա ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է քրեական գործը:

Դատախազության կողմից ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում նախկինում արձանագրված խախտումների վերացման և հետագայում այդպիսիք բացառելու հարցը ՀՀ դատախազության 2020 թվականի 1-ին կիսամյակի աշխատանքային ծրագրով նախատեսվել է որպես ստուգման առարկա:

Վարչության կողմից ներկայացվել է համապատասխան նախագիծ՝ «Դատախազության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ, որն այժմ գտնվում է շրջանառության մեջ:

ՀՀ դատախազության դատախազների կողմից հաշվետու ժամանակաշրջանում «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով սահմանված՝ պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության բնագավառում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

2019 թվականի ընթացքում կատարվել է 1233 ստուգում և ուսումնասիրություն, որոնց արդյունքում հայտնաբերվել է 591 խախտում: Պատկան մարմիններին ուղարկվել է 9

հաղորդում: Ներկայացվել է 47 միջնորդագիր, որոնց հիման վրա վերանայվել է օրինականությանը հակասող 41 ակտ: Իրականացվել է 4 ծառայողական քննություն: Հարուցվել է 12 քրեական գործ, կասեցվել է օրենսդրությանը հակասող 40 ակտ:

ՀՀ դատախազության դատախազները հաշվետու ժամանակաշրջանում պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պայմանական վաղաժամկետ ազատումը վերացնելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու, ծանր հիվանդության կամ արտակարգ հանգամանքների հետևանքով պատժից ազատելու վերաբերյալ միջնորդությունների և դատարանի կողմից դատական որոշումներն ի կատար ածելու հետ կապված այլ հարցերի վերաբերյալ 1870 գործերով մասնակցել են դատական քննության:

Դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ գործերից 49-ով բերվել է վերաքննիչ բողոք, որոնցից 12-ը բավարարվել է, 8-ով բերվել է վճռաբեկ բողոք:

Տուգանքը կամ տուգանքի չվճարած մասը հանրային աշխատանքներով փոխարինելու վերաբերյալ բերվել է 1 վերաքննիչ բողոք, որը բավարարվել է:

Այլ գործերից 22-ով բերվել է վերաքննիչ բողոք, որից 14-ը բավարարվել է:

Այլ գործերով բերվել է 18 վճռաբեկ բողոք, որոնք բավարարվել են:

Հաշվետու ժամանակաշրջանում տարբեր պատճառներով քրեակատարողական հիմնարկներում մահացել է թվով 21 պահվող անձ: Բոլոր դեպքերի կապակցությամբ հարուցվել են քրեական գործեր:

2020թ. հունվարի 1-ի դրությամբ կալանավորված անձանց և դատապարտյալների ընդհանուր թիվը կազմել է 2221, որոնցից 1017-ը՝ կալանավորված անձ՝ 35-ը՝ կին, և 8 անչափահաս, 1204 դատապարտյալ՝ 34 կին:

2020թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պատիժ է կրում ցմահ ազատազրկման դատապարտված 91 անձ:

Միջազգային-իրավական համագործակցության ոլորտ - 2019 թվականի ընթացքում ԱՊՀ մասնակից-պետությունների դատախազություններ ուղարկվել է քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու մասին 161 միջնորդություն (նախորդ տարի՝ 170), իսկ այլ օտարերկրյա պետություններ՝ 456 միջնորդություն (նախորդ տարի՝ 356), ընդամենն ուղարկվել է 617 միջնորդություն (նախորդ տարվա 526 միջնորդության փոխարեն), որից 35-ը կոռուպցիոն հանցագործություններով:

Հաշվետու ժամանակահատվածում վարչությունում քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու մասին ԱՊՀ պետությունների իրավասու մարմիններից ստացվել է 129 միջնորդություն (նախորդ տարվա ընթացքում՝ 145), իսկ այլ օտարերկրյա պետություններից՝ 34 միջնորդություն (նախորդ տարվա ընթացքում՝ 28), ընդհանուր առմամբ ստացվել է 163 (նախորդ տարվա 173-ի փոխարեն), որից 8-ը կոռուպցիոն հանցագործություններով:

Հաշվետու ժամանակաշրջանում վարչությունն իրականացրել է Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների կողմից հետախուզվող և օտարերկրյա պետություններում հայտնաբերված անձանց հանձնելու մասին 40 միջնորդությունների նախապատրաստման և ուղարկման կազմակերպումը (նախորդ տարվա 51-ի դիմաց), որից 25-ն ուղարկվել են ԱՊՀ մասնակից-պետությունների, իսկ 15-ը՝ այլ օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների քննարկմանը:

Հաշվետու ժամանակահատվածում ներկայացված 40 հանձնման միջնորդություններից 14-ը բավարարվել են, 7-ը մերժվել են, 19-ը գտնվում են քննարկման փուլում, բավարարվել են նաև նախկինում ներկայացված ևս 16-ը:

Զգալիորեն աճել է օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների կողմից հետախուզվող և Հայաստանի Հանրապետության տարածքում հայտնաբերված հետախուզվողների (որոնց նկատմամբ հայցող պետության իրավասու մարմինների կողմից խափանման միջոց է ընտրված եղել կալանավորումը), հետևաբար նաև ստացված հանձնման մասին միջնորդությունների թիվը:

Օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից ստացված 31 միջնորդություններից (նախորդ տարի՝ 25, 2017թ.՝ 12) բավարարվել է 15-ը, թողնվել է առանց քննարկման 2-ը, 6-ն՝ ուղարկվել է ՀՀ արդարադատության նախարարություն, իսկ 8-ը՝ գտնվում են քննարկման փուլում:

Վարչությունում հաղորդում է ստացվել ՀՀ-ում հայտնաբերված այլ երկրների կողմից հետախուզվող 187 անձի վերաբերյալ (նախորդ տարի՝ 189):

Շարունակաբար աճում է օտարերկրյա պետությունների կողմից հետախուզվող և ՀՀ տարածքում հայտնաբերված ու կալանավորված անձանց թիվը: Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ ԱՆ տարբեր քրեակատարողական հիմնարկներում պահվել են դատախազների միջնորդությամբ կալանավորված շուրջ 33 հետախուզվող (նախորդ տարի՝ 25):

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը շարունակել է զարգացնել համագործակցությունը Եվրոպայի Խորհրդի, ՄԱԿ-ի, ԵՄ-ի, ԵԱՀԿ-ի համապատասխան ներկայացուցիչների, ԱՊՀ մասնակից-պետությունների գլխավոր դատախազների կոորդինացիոն խորհրդի քարտուղարության, Դատախազների միջազգային ասոցիացիայի ու Հայաստանի Հանրապետությունում դիվանագիտական ներկայացուցչությունների հետ:

ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը, անդրադառնալով հանցավորության շարժընթացում արձանագրված միտումներին՝ դրանք խիստ մտահոգիչ համարեց՝ նշելով, որ նպաստող ավանդական գործոնների համակողմանի վերլուծությունը վկայում է, որ հատկապես առաջնային ուշադրության է պետք արժանացնել քրեական հետապնդման բոլոր մարմինների աշխատանքում առկա որոշակի թերացումներին: Գլխավոր դատախազը հատկապես դատախազության տարածքային ստորաբաժանումների ղեկավարներին հանձնարարեց անհապաղ ձեռնամուխ լինել հատկապես մեծ վտանգավորություն ներկայացնող նշված հանցատեսակներով խորը և համակողմանի վերլուծություններին՝ հաշվի առնելով տարածքային առանձնահատկությունները և դրանց հիման վրա ոչ միայն օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու կոնկրետ և թիրախային հանձնարարություններ տալ, այլև խստորեն հետևել դրանց կատարման ընթացքին: Այս հարցում հետագա թերացումները, դրսևորված անփույթ և անտարբեր վերաբերմունքը՝ անկախ նրանից՝ որ օղակում է արտահայտվում, պետք է արժանանա խիստ իրավական, իսկ հիմքերի դեպքում նաև քրեաիրավական գնահատականի:

Շարունակվում են լուրջ արդյունքներ արձանագրվել հատկապես կոռուպցիայի դեմ պայքարում: Ընդհանուր առմամբ 4.7 տոկոսով ավելացել են կոռուպցիոն դեպքերով քրեական վարույթների հարուցումները, 26,6%-ով՝ իրավասու մարմինների վարույթում քննվող կոռուպցիոն քրեական գործերի քանակը: Սակայն այս ոլորտում հիմնական դրական որակական տեղաշարժն արձանագրվել է քրեական հետապնդման ոլորտում: Մասնավորապես 2018թ. համեմատ մոտ 59%-ով ավելացել են դատարան ուղարկված կոռուպցիոն գործերը, 68%-ով՝ դատի տրված անձանց թիվը: Միայն վարույթն ավարտված նյութերով, քրեական գործերով և դատարանում քննված և ավարտված գործերով կոռուպցիոն հանցագործություններով պետությանը պատճառված վնասը շուրջ 12 անգամ գերազանցում է

2018թ. արդյունքը, իսկ այդ գործերով վերականգնված վնասը նախորդող տարվա համեմատ ավելի է 2.5 անգամ:

Անդրադառնալով պետական շահերի պաշտպանության ոլորտին՝ Ա. Դավթյանը նշեց, որ չնայած նշված ոլորտներում կատարված հսկայածավալ աշխատանքներին, անհրաժեշտ է մի կողմից ակտիվացնել պետական շահերի պաշտպանության գործառույթի լիարժեք իրացմանն ուղղված դատախազության տարածքային ստորաբաժանումների ջանքերը՝ նախապես հստակեցնելով և թիրախավորելով համապատասխան տարածաշրջաններին բնորոշ ռիսկային ոլորտները: Ա. Դավթյանը հանձնարարեց առաջնահերթություն սահմանել հստակ պլանավորված գործողությունների միջոցով հանցագործություններով պետությանը պատճառված վնասի հայտնաբերումն ու վերականգնումը, ինչը դառնալու է արդյունավետության գնահատման հիմնական չափորոշիչներից մեկը: ՀՀ գլխավոր դատախազի կողմից խնդիր դրվեց դատախազական ներգործության միջոցների գերակտիվ գործադրմամբ նպաստել կոռուպցիոն քրեական գործերով քննությունների հնարավորինս արագ հանգուցալուծմանը և բավարար ապացուցողական բազայի ձևավորմամբ մեղադրական եզրակացություններով գործերը դատարան ուղարկելուն: Ընդ որում՝ շեշտը դրվեց կոռուպցիոն գործերով որպես մեղադրյալ անցնող անձանց կողմից թաքցվող գույքի բացահայտման ուղղությամբ օպերատիվ-հետախուզական ակտիվ միջոցառումների ձեռնարկման վրա:

Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ դատախազական հսկողության արդյունավետության համատեքստում ՀՀ գլխավոր դատախազն առանձնահատուկ կարևորեց քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց իրավունքների պաշտպանության և պատժի նպատակների իրականացման ներդաշնակության ապահովումը՝ դատախազական գործառույթների բացարձակ իրավաչափ իրականացմամբ:

Ելնելով վերոգրյալից՝

ԿՈԼԵԳԻԱՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների կայազորների զինվորական դատախազներին՝

1) 5-օրյա ժամկետում՝ ստորաբաժանման անմիջական հսկողության ներքո գտնվող՝ 2019 թվականին կատարված սպանության, սպանության փորձի, առողջությանը ծանր վնաս հասցնելու, ինչպես նաև հրազենի գործադրման դեպքերով հարուցված քրեական գործերով իրականացնել վերլուծություններ քրեական գործերի ընթացքի, հանցագործությունները ծնող պատճառների, չբացահայտված գործերով բացահայտմանը խոչընդոտող հանգամանքների վերաբերյալ՝ համապատասխան հաղորդումներ ուղարկելով ոստիկանության ստորաբաժանումներ և հետամուտ լինել դրանց քննարկման նպատակով դատախազության ստորաբաժանման ղեկավարի մասնակցությամբ խորհրդակցությունների անցկացմանը: 10-օրյա ժամկետում՝ իրականացված աշխատանքների արդյունքները համապատասխան զեկուցագրերով ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալին:

2) Քրեական գործով վարույթն իրականացնող մարմնին ցուցումներ, իսկ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնին օպերատիվ հանձնարարականներ տալիս ապահովել հանձնարարվող գործողությունների հստակությունը՝ դրանցում մատնանշելով հանձնարարվող գործողության շրջանակները և քրեադատավարական հիմքերը, հնարավորության դեպքում նշելով նաև ակնկալվող արդյունքը, բացառել նախկինում

տրված ցուցումների հետ հնարավոր հակասությունները և տարընթերցումները, ապահովել ցուցումների հիմքում ընկած իրավական դիրքորոշումների միատեսակությունը և նույնական մեկնաբանումը՝ հիմնված ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների, վճռաբեկ դատարանի նախադեպային իրավական դիրքորոշումների, ՀՀ դատախազության կոլեգիայի որոշումների վրա: Ընդ որում, նախաքննության ժամկետները երկարացնելու վերաբերյալ միջնորդությունները բավարարելու դեպքում չկատարված գործողությունների վերաբերյալ պարտադիր տալ ցուցումներ: Տրված ցուցումների և հանձնարարականների դեմ անհիմն առարկություններ ներկայացվելու դեպքում համապատասխան զեկուցագրով այդ մասին հայտնել ՀՀ գլխավոր դատախազին կամ ոլորտը համակարգող տեղակալին: Ապահովել հետագա հսկողություն՝ տրված ցուցումների և օպերատիվ հանձնարարականների ամբողջությամբ կատարման նկատմամբ, մասնավորապես, օպերատիվ հանձնարարականների կատարման արդյունքների վերաբերյալ անորոշ և ոչ հստակ տեղեկատվություն ստանալու դեպքում «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններից պարտադիր պահանջել միջոցառումների անցկացման համար հիմք հանդիսացող փաստաթղթերը, ինչպես նաև վերաբերելի այլ տեղեկատվություն՝ օպերատիվ-հանձնարարականների իրապես կատարված լինելը ստուգելու նպատակով:

3) Այն դեպքերում, երբ քննությունից թաքնվող անձի նկատմամբ հետախուզում հայտարարելու և տվյալ անձին հայտնաբերելու միջև ընկած ժամկետը կարճ է կամ այլ ողջամիտ կասկածներ կան հետախուզական աշխատանքների արհեստական արդյունքներ ապահովելու առնչությամբ, պարտադիր քննության առարկա դարձնել մինչև հետախուզում հայտարարելը տվյալ անձին բերման ենթարկելու որոշումը չկատարելու, քննությունից թաքնվող անձի գտնվելու վայրը իրավասու պաշտոնատար անձանց նախապես՝ մինչև հետախուզում հայտարարելը հայտնի լինելու հանգամանքները և ձեռնարկել դատախազական ներգործության միջոցներ:

4) Վարույթում գտնվող ընթացիկ քրեական գործերի քննության ընթացքում հանցավոր ենթամշակույթի դրսևորումների նվազագույն տվյալները դարձնել լրիվ և բազմակողմանի քննության առարկա: Հանցավոր ենթամշակույթ կրող անձանց վերաբերյալ տվյալների առկայության դեպքում պարտադիր մանրամասն քննության առարկա դարձնել նշված անձանց արարքներում ՀՀ քրեական օրենսգրքի 223.1-223.4-րդ հոդվածներով նախատեսված հանցակազմերի առկայության հարցը:

2. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա. Հարությունյանին՝

15-օրյա ժամկետում՝ սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն ՀՀ դատախազության տարածքային ստորաբաժանումներից ստացված զեկուցագրերի հիման վրա կազմել ՀՀ ոստիկանության պետին ուղղված գրություն՝ սպանության, սպանության փորձի, առողջությանը ծանր վնաս հասցնելու, հրազենի գործադրմամբ կատարված հանցագործությունների դեպքերով հարուցված քրեական գործերի ընթացքի, հանցագործությունները ծնող պատճառների, չբացահայտված գործերով բացահայտմանը խոչընդոտող հանգամանքների վերաբերյալ՝ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու առաջարկություններով:

3. ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով, մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով, տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով, սեփականության դեմ ուղղված

հանցագործությունների գործերով, հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով, բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով, ՀՀ հատուկ քննչական ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության, ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունների պետերին, Երևան քաղաքի դատախազին՝

1) Մեկամսյա ժամկետում՝ գույքագրել այն խնդիրները, որոնց վերաբերյալ քրեական հետապնդման մարմինների աշխատանքում առկա են ոչ միատեսակ և վիճելի մոտեցումներ՝ կապված հանցագործությունների որակումների, առանձին հանցագործությունների քննության տակտիկայի, պարտադիր կատարման ենթակա քննչական գործողությունների, պարզաբանման ենթակա հանգամանքների շրջանակի հետ և համապատասխան զեկուցագրեր ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազին:

2) Ապահովել, որպեսզի վերահսկողական գործառույթներն իրականացնելիս ընթացիկ քրեական գործերով իրականացվի հընթացս հսկողություն և անհրաժեշտության դեպքում պարտադիր կիրառվեն դատախազական ներգործության միջոցներ՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից հսկող դատախազներին տրվող ցուցումների, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու հանձնարարությունների տեսքով:

3) Ապահովել ՀՀ գլխավոր դատախազի հրամանների և հանձնարարականների, ՀՀ դատախազության կոլեգիայի որոշումների անշեղ կատարումը: Ընդ որում, վերահսկողական և հսկողական գործառույթներ իրականացնելիս նշված հանձնարարականների և որոշումների խախտումներ հայտնաբերելիս պարտադիր զեկուցագիր ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազին:

4) Օպերատիվ խորհրդակցություններում քննարկման առարկա դարձնել ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների դեպքերով (Երևան քաղաքի դատախազը՝ Երևան քաղաքում տեղի ունեցած ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործությունների դեպքերով) հարուցված և 6 ամսից ավել քննվող քրեական գործերի ընթացքը, պարզել նախաքննության ժամկետների ձգձգման պատճառները, քրեական գործերի ընթացքը լուծելու նպատակով տալ կոնկրետ հանձնարարություններ կատարման հստակ ժամկետներով: Նախկինում տրված հանձնարարականների չկատարման, ինչպես նաև նախաքննության ժամկետների ձգձգման ոչ օբյեկտիվ պատճառների դեպքում զեկուցագիր ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազին:

4. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալներին՝

Ըստ համակարգման ոլորտների՝ ապահովել, որպեսզի ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների դեպքերով 8 ամսից ավել քննվող քրեական գործերով ՀՀ գլխավոր դատախազի ոլորտը համակարգող տեղակալի մոտ կազմակերպվեն օպերատիվ խորհրդակցություններ, որոնց ընթացքում նախաքննության ժամկետների ձգձգման պատճառները, քրեական գործերի ընթացքը լուծելու նպատակով տալ կոնկրետ հանձնարարություններ կատարման հստակ ժամկետներով: Նախկինում տրված հանձնարարականների չկատարման, ինչպես նաև նախաքննության ժամկետների ձգձգման ոչ օբյեկտիվ պատճառների դեպքում զեկուցագիր ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազին:

5. ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության պետին՝

1) 2 շաբաթվա ընթացքում՝ պետական շահերի պաշտպանության ոլորտում նվազ ցուցանիշներ ունեցող ՀՀ դատախազության տարածքային ստորաբաժանումների

համապատասխան դատախազներին հրավիրել ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչություն և անցկացնել խորհրդակցություններ գործողությունների պլանավորման, պետական շահերի պաշտպանության արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ:

2) Վարչության կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքներով այնպիսի իրավախախտումների, հանցագործությունների հայտնաբերման դեպքում, որպիսիք ողջամտորեն տարածում կարող են ունենալ Հանրապետության ողջ տարածքում կամ առանձին ոլորտներում՝ նախաձեռնել լայնամասշտաբ ուսումնասիրություններ՝ աշխատանքներում ներգրավելով ՀՀ դատախազության տարածքային ստորաբաժանումներին՝ վերջիններիս հստակ գործողությունների մատնանշմամբ:

6. ՀՀ գլխավոր դատախազության վարչությունների և զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին, ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների կայազորների զինվորական դատախազներին՝

1) Հանցագործությամբ պետությանը պատճառված վնասի հայտնաբերման և վերականգնման ուղղությամբ ապահովել լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննություն, օպերատիվ հանձնարարականներ տալ իրավասու մարմիններին պետությանը պատճառված վնասի ամբողջական ծավալների բացահայտման և մեղավոր անձանց հայտնաբերման ուղղությամբ: Ոչ արդարացնող հիմքով քրեական գործ հարուցելը մերժելու կամ քրեական գործով վարույթը կարճելու դեպքերում պարտադիր կերպով օգտագործել դատավարական բոլոր հնարավորությունները պետությանը պատճառված վնասի վերականգնման ուղղությամբ:

2) Ապահովել, որպեսզի հանցագործության կատարմանն առնչություն ունեցող անձանց մոտ օրենքով սահմանված հիմքերով կատարվեն անձնական խուզարկություններ, որոնց արդյունքում կամ դատավարական այլ գործողությունների արդյունքում հայտնաբերված բջջային հեռախոսներում առկա տեղեկատվությունը օրենքով սահմանված կարգով պարտադիր ենթարկվի զննության: Մասնավորապես, թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների վերաբերյալ գործերով ապահովել դրանց կատարմանն առնչություն ունեցող անձանց հեռախոսներում առկա տեղեկատվության զննությունը՝ թմրամիջոցներ ապօրինի իրացնելու առավել տարածված եղանակի, այն է՝ թմրամիջոցների իրացմամբ զբաղվող անձանց կողմից բջջային հավելվածների /Viber, WhatsApp և այլն/, համացանցի տարբեր սոցիալական ցանցերում գրանցված էջերի միջոցով թմրամիջոց ձեռք բերող անձի հետ կապ հաստատելու հանգամանքները ստուգելու նպատակով:

7. ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով, ՀՀ հատուկ քննչական ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության, ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունների պետերին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների կայազորների զինվորական դատախազներին

Քրեական գործով վարույթի ընթացքում ենթադրյալ հանցագործություն կատարած անձի կողմից ապօրինի ճանապարհով ստացված եկամուտներ կամ այլ գույք ունենալու և դրանք քողարկելու վերաբերյալ տվյալներ ձեռք բերելու դեպքում պարտադիր տալ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու հանձնարարություններ ապօրինի ճանապարհով ստացված եկամուտների կամ այլ գույքի վերհանման, քողարկման

մեխանիզմների բացահայտման նպատակով: Գույքագրել բոլոր այն դեպքերը, որոնք կարող են ուսումնասիրություն սկսելու հիմք համարվել «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով: Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ գործերով վարույթների ընթացքում, որպես կանոն, բացառել ցուցումների, հանձնարարականների կամ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու հանձնարարությունների բացակայությունը:

8. ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետին՝

Ապահովել, որ պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրիականության նկատմամբ հսկողություն իրականացնելիս բոլոր դեպքերում պահպանվի ողջամիտ հավասարակշռություն ազատությունից զրկված անձի ներպետական և միջազգային իրավունքով երաշխավորված իրավունքների իրացման և պատժի նպատակների իրականացման միջև: Պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցի քննարկման վերաբերյալ յուրաքանչյուր դեպքով ապահովել դատական նիստին մասնակցող դատախազի՝ հստակ փաստարկված դիրքորոշման ներկայացումը:

9. ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետին՝

1) 10-օրյա ժամկետում՝ ՀՀ գլխավոր դատախազի հրամանների, հանձնարարականների, ՀՀ դատախազության կոլեգիայի որոշումների կատարման վիճակի վերաբերյալ իրականացված ուսումնասիրության արդյունքները շրջաբերական նամակով ուղարկել ՀՀ գլխավոր դատախազության վարչություններ և զինվորական կենտրոնական դատախազության բաժիններ, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների, կայազորների զինվորական դատախազություններ: Ամփոփել ՀՀ գլխավոր դատախազի հրամանների, հանձնարարականների, ՀՀ դատախազության կոլեգիայի որոշումների կատարման կիսամյակային տվյալները և մինչև 2020 թվականի օգոստոսի 15-ը համապատասխան զեկուցագրով ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազին:

ԿՈԼԵԳԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ՝ **Ա.ԴԱՎԹՅԱՆ**

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ-ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ
ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ **Ա.ՄԱՐՈՒԽՅԱՆ**